ՊԱՇՏՈՆ	Կորպորատիվ պրոդուկտ մենեջեր
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ	13/08/2025թ.
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	29/08/2025թ.
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Երկարաժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է մոտիվացված և խելացի թիմի անդամի, ով կմիանա Բանկին որպես Կորպորատիվ պրոդուկտ մենեջեր:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Նոր պրոդուկտների ներդրման առաջարկների ներկայացում, պրոդուկտի ներդրում՝ համաձայն Բանկում գործող ընթացակարգերի պահանջների:
- Իրականացնել իրեն կցված պրոդուկների մասով.
  - շուկայում առաջարկի և պահանջարկի ուսումնասիրություն, որի հիման վրա լրամշակման և փոփոխությունների իրականացման անհրաժեշտության հիմնավորում, առաջարկների ներկայացում և իրագործում,
  - վաճառքի խթանման ուղղված առաջարկների ներկայացում, իրագործում,
  - վաճառքի, ձևակերպման և հետսպասարկման գործընթացների մշակմանը մասնակցություն՝ ներքին ակտերի, կարգերի, ընթացակարգերի տեսքով,
  - տեղեկատվության տրամադրում/փոխանակում (հարցումներ, նամակներ այլ ներքին և արտաքին գրություններ),
  - ներդրված պրոդուկտների վաճառքի ծավալների ուսումնասիրություն և հաշվետվությունների պատրաստում՝ ըստ անհրաժեշտության,
  - բանկի կողմից հրապարակվող նյութերում պրոդուկտների/ծառայությունների սակագների և պայմանների համապատասխանության ապահովում,
  - մարքեթինգային միջոցառումների/արշավների իրականացմանը մասնակցություն (տեղեկատվության տրամադրում, հետագա համագործակցում և այլ անհրաժեշտ գործողություններ),
  - վերոնշյալ կետերով սահմանված գործընթացների իրագործման համար ակտիվ համագործակցում Բանկի բոլոր շահագրգիռ ստորաբաժանումների հետ:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- Նվազագույնը 2 տարվա աշխատանքային փորձ համանման ոլորտում
- Բանկային գործունեության, բանկային պրոդուկտների և ծառայությունների իմացություն
- Բանկային օրենսդրության իմացություն
- Նախագծերի կառավարման մեթոդների, միջազգային կանոնների, ֆինանսների և մարքեթինգի լավ իմացություն
- Լեզուների իմացություն՝ մասնավորապես ռուսերենով հաղորդակցման լավ ունակություն,
- Համակարգչային գիտելիքներ՝ MS Office ծրագրային փաթեթի լավ իմացություն, հատկապես Excel և PowerPoint,

- Հաղորդակցման հմտություններ
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացում
- Գաղտնապահություն
- Կազմակերպչական հմտություններ և ժամանակի արդյունավետ կառավարում
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ, միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու կարողություն
- Փոփոխություններին արագ արձագանքելու կարողություն
- Առաջնային և երկրորդական հանձնարարությունները տարբերակելու կարողություն
- Ճկունություն, աշխատասիրություն
- Մանրուքների նկատմամբ ուշադրություն
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/71 : Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկ»-ը հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ անվանումով:
«ԱյԴի Բանկ»-ի առաքելությունն է հաճախորդների համար լինել առաջին ընտրության լավագույն նորար Բանկ՝ ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ https://idbank.am/